1893 ՄԱՐՏԻ 10 (22), ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

№ 29—ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 29

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 10 (22) 1893

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.: Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ԱՐՁԱԳԱՆՔԸ" ՆԵՐԿԱՅ 1893 ԹՈՒԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ներկայ 1893 թուին «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կըհրատարակուի այժմեան ղիրքով և նոյն ծրագրով: Թերթը կըստանայ «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ:

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»՝ տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան հրապարակի և Միջի-Փողոցի անկիւն, քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քահանանե՞ր թէ հերթապահներ.
Բարեգործական Ընկերութեան տասն և երկու անդամների բողոքը:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Նախարարութեան առաջարկութիւնը առողջապահութեան վերաբերեալ: Նոբելեան նաւթագործների սինդիկատի նոր ձեռնարկութիւնը: Լիսի գիւղի հայոց եկեղեցու շինութիւնը: Ռափայէլ Պատկանեանի պատկերը: Հին-Նախիջևանից: Վերին-Ագուլիսից: Նամակ Պետերբուրգից: Ֆինլանդիայի իշխանութիւնը: 'Ի յիշատակ Աղէքսանդր II կայսեր տաճար Պետերբուրգում: Բաց նամակ մեր նախկին պաշտօնակիցներին: Նամակ խմբագրութեան: Նամակ Նոր-Նախիջևանից: Նամակ խմբագրին: Բագուից: Խօլերայով բռնուածներ ռուսական քանի մի նահանգներում: Հրդեհի դէմ փոխադարձ ապահովութեան ընկերութեան ընդհանուր ժողովը:
ՖԵԼԻԵՏՕՆ.—Կնոջ դրութիւնն արևելքում:
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նամակ Լօնդօնից:
ՔԱՂԱՔԱԿԱՆ.
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
ԶԱՆԱԶԱՆ.
ՏԵՂԵԿԱՏՈՒ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՔԱՀԱՆԱՆԵ՞Ր ԹԷ ՀԵՐԹԱՊԱՀՆԵՐ

Մեր սուրբ եկեղեցու հնաւանդ սովորութեամբ քահանայք պէտք է իւրաքանչիւր եկեղեցական պաշտաման ժամին ներկայ լինին: Ի՞նչպէս կարող է քահանան իրան ազատ համարել աղօթքից, երբ Փրկիչը պատուիրում է «յամենայն ժամ կալ յաղօթս»:

Եթէ մի եկեղեցում կան շատ քահանայք, նրանք ամենքն էլ ամեն ժամերգութեան պիտի մասնակցեն, իսկ նրանցից մէկը, որ ըստ կանոնական կարգի աւագ քահանան է, պիտի բնակուի եկեղեցու բակումը, որպէսզի յանկարծահաս դիպուածներում օգնութիւն հասնի և օրինակաւորութիւն անէ: Այն եկեղեցիներում, ուր աւագ քահանայ չկայ, քահանայք հերթով քնում են եկեղեցու բակում գտնուած սենեակում, նոյն նպատակի համար: Այս կարգը պահպանվում է ցարդ շատ թեմերում, ինչպէս օրինակ՝ Երևանի մեծ թեմում:

Թիֆլիզ քաղաքում քահանայք վերացրել են այս կարգը և մի նոր և քահանայութեան խորթ սովորութիւն են սահմանել:

Թիֆլիզի եկեղեցիներից և ոչ մէկում, եթէ չենք սխալվում, աւագ քահանայք չեն կատարում իրանց պաշտօնը. նրանք այդ չեն էլ կարող կատարել, որովհետև ոչ մի եկեղեցու բակում բնակարան էլ չունին:

Թիֆլիզի եկեղեցիների քահանաները հերթապահութիւն են սահմանել. Նրանցից իւրաքանչիւրը միայն մի շաբաթ է պաշտօն կատարում և եկեղեցի գնում: Մի եկեղեցի, որ չորս քահանայ ունի, իսկապէս միայն մի քահանայի երես է տեսնում, պատահում են դէպքեր ևս, որ հերթապահ քահանան անկարող լինելով ժամերգութեան գալ, բարեպաշտ ժողովուրդը զրկվում է ժամերգութիւնից:

Եկեղեցական պաշտամունքը ձևականութիւն չէ, և ոչ էլ ժամերգութիւնը կարգապահական մի ձևականութիւն, որ մի քահանայ նշանակուի հսկելու դրա վրայ:

Համայնքի աղօթքին, որի ժամերը որոշուած են կանոնական կարգով, պիտի մասնակցեն եկեղեցու բոլոր անդամները:

Մենք այժմ այնքան խորթացել ենք եկեղեցուց, որ հազիւ միայն մեծ տօներին ենք խմբվում եկեղեցում աղօթելու: Քահանայից դասն այդ անտարբերութեան մեղքը սովոր է ժողովրդի վրան բարդելու, բայց ո՞րքան իրաւունքով, այդ երևում է մեր արձանագրուած փաստից:

Քահանան ինքն ինչպէս է ըմբռնում իւր պարտքն առ եկեղեցին ու համայնքը, ինքն ինչ նշանակութիւն է տալիս իւր սուրբ պաշտօնին, որպէսզի նրա օրինակին հետևէ իւր բոլոր հօտը. այդ մի ծանրակշիռ խնդիր է, որի վրայ մեր սուրբ եկեղեցու նախանձախնդիրներն աւելի ուշք պիտի դարձնեն:

Հերթապահական այն կարգը, որով վարվում են Թիֆլիզի քահանաները հակառակ է թէ քահանայութեան կոչման և թէ մեր սուրբ եկեղեցու կանոններին:

Հոգևոր իշխանութեան պարտքն է վերականգնել մեր սուրբ եկեղեցու հնաւանդ կարգն ու կանոնը: Քահանաները հերթապահներ չեն, այլ եկեղեցու մշտական պաշտօնեաներ:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Հայոց Բարեգործական Ընկերութեան վերջին Ընդհանուր ժողովի մէջ կատարուած տխուր երևոյթները, որոնք տեղի ունեցան գլխաւորապէս ժողովի մեծ. պ. նախագահ—բժշկապետ Նաւասարդեանի պարտազանց գտնուելու շնորհիւ—առիթ են տուել նիստին ներկայ գտնուող Ընկերութեան 12 անդամներին մի յայտարարութիւն մատուցանել Ընկերութեան Խորհրդին, որի մէջ նոքա մատնանիշ են անում ժողովի անվաւեր, անպատուաբեր և ապօրինի գործողութիւնների վրայ:

Առաջ ենք բերում այդ յայտարարութիւնը.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԳԵԼԻ ԽՈՐՀՐԴԻՆ

«Ընկերութեանդ փետրվարի 21-ին կայացած Ընդհանուր ժողովին, որ փետրվար 14-ի նիստի շարունակութիւնն էր, մի քանի աչքի զարնող զեղծումներ ու անկանոնութիւններ տեղի ունեցան, որոնց դէմ բողոքելու մենք մեր պարտքն ենք համարում յանուն Կանոնադրութեան սկզբունքների պաշտպանութեան և պատւոյ:

Ա. Հակառակ Կանոնադրութեան 44 §-ի պ. Համբարձում Առաքելեանը, որ վարչութեան քարտուղար գոլով թէև պարտաւոր էր աւելի քաջ ծանօթ լինել Կանոնադրութեան և աւելի յարգել նոյնը, իրան թոյլ տուեց մի նոր առաջարկութիւն անել, որ հերթական խնդիրների մէջ չէր մուծուած, այն է՝ «Արձագանք» թերթի խմբագրութեան գրաւոր նկատողութիւն յայտնել, երբ այն պատճառով, որ վերջինս հեգնօրէն է վերաբերուել Ընկերութեան նախորդ ժողովին, աղաւաղած տպագրելով արձանագրութիւնը: Եւ այդ առաջարկը, որի դէմ բողոքողներ եղան, այնուամենայնիւ Կանոնադրութեան հակառակ ընդունւեցաւ ժողովի յարգելի նախագահից, երբև մի օրինական հիմք ունեցող յայտարարութիւն և նորա բարեհաճ թոյլտուութեամբ և համաձայնութեամբ քուէարկութեան ենթարկուեցաւ, որով և բողոքողների իրաւունքը բռնաբարուեց:

Բ) Թէև ընտրութիւններն սկսելիս նախապէս որոշուած էր, որ կանդիդատները թերթիկներով առաջարկուին և բոլորի ազգանունները մի առ մի կարդալուց յետոյ գաղտնի քուէարկութեան ենթարկել, բայց և այնպէս 26 թերթիկ արձանագրելուց յետոյ, նախագահի առաջարկութեան համեմատ ժողովը որոշեց բաւականանալ այդ ազգանուններով և իսկոյն սկսեց տուփերով քուէարկել, մինչդեռ ժողովականներից շատերը պնդում էին, որ այդ ձևը հակաօրինական է և քանի որ ներկայ եղող անդամների թիւը 75 է, անհրաժեշտ է դէթ $^{1}/_{3}$-ականը կարդալ և ապա ընտրելիների ցանկը կազմել: Սակայն այդ ևս պ. նախագահի ուշադրութեան չարժանացաւ և իբրև կարծիք փոքրամասնութեան արհամարհանքի մատնուեց:

Գ. Պետութեան մէջ գոյութիւն ունեցող և բովանդակ քաղաքակիրթ աշխարհում ընդունուած օրինաց համեմատ, հրապարակական ժողովներին ներկայ գտնուող հանդիսատես հասարակութիւնը պարտաւոր է լուռ մնալ, առանց գործերին միջամտելու, և գործերի օրինական ընթացքը չխանգարել, սակայն այդ ժողովին գալերիայի հանդիսատես հասարակութիւնն ընդհանուր ժողովի բաղադրիչ մասն էր կազմում և իւրաքանչիւր րոպէ ծափահարութիւններով սուլոցներով և բղաւոցով թէ իւր համակրութիւնը և թէ իւր հակակրութիւնն էր արտայայտում և երբեմն իւր veto-ն դնում խնդիրը իւր ցանկացածի պէս լուծելու համար, որով և իրաւունք տուեց մեզ տրամադիր լինելու, որ յարգելի նախագահը ևս համակիր է այդ երևոյթին, ըստ որում վերջինս ոչ մի անգամ զանգ չհնչեցրեց, որ վերջ տայ զգացմունքների այդ տգեղ արտայայտութեան:

Արդ՝ ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ մեր առաջ բերած փաստերն ակներև կերպով ապացուցում են, նախ՝ որ պ. նախագահը, որի անմիջական պարտականութիւնն է Կանոնադրութեան իւրաքանչիւր յօդուածի սրբութեամբ կատարելը և թէ իւրաքանչիւր անդամի օրինական իրաւունքների ճանաչելը և յարգելը, անկարող եղաւ այդ ժողովին իւր կոչման բարձրութեան կէտի վրայ մնալ, և երկրորդ՝ որ այդ զեղծումներն անպատուաբեր են Ընկերութեան համար, մենք յանուն Կանոնադրութեան վեհութեան և Ընկերութեան շահերը յարգելով ամենախոնարհաբար զեկուցանում ենք պատկառելի Խորհրդիդ պատշաճաւոր տնօրէնութեան համար, միանգամայն ապաւինելով և չերկբայելով, որ Խորհուրդդ՝ յարգելով Կանոնադրութիւնը և մեր իրաւունքները ճանաչելով, առանց հետևանքի չի թողնի այդ»:

Այս յայտարարութիւնն ստորագրել են՝ պետական խորհրդական պ. Ա. Ռոտինեանը, սապեօրների գնդի ըսպայ պ. Ա. Սուրէնեանը, «Ռուզանի» հեղինակ և վիպագիր պ. Գր. Տէր-Յովհաննիսեանը, Կոնտրոլի Պալատի աստիճանաւոր Ե. Թաւարքէզեանը, հաշուապահ պ. Ա. Թարխանեանը, իրաւաբան և մատենագիր պ. Փ. Վարդանեանը, պետական կալուածքների աստիճանաւոր արքունական խորհրդական Ստեփաննոս Ջելինսկին, Թիֆլիզի Քաղաքային Վարկի Ընկերութեան գործավար Բ. Առաքելեանը և Թիֆլիզի պատուաւոր քաղաքացիք՝ Ամիրաղեան, Սուսանեան, Մաթէոսեան և Տէր-Ղևոնդեանց:

Չէ կարելի չյաւել, որ այս յարգելի անձինքը վրդովուած լինելով յիշեալ ապօրինի գործողութիւնների և անվայել գործավարութեան դէմ, շտապել են օր առաջ մատուցանել Խորհրդին իրանց բողոքը և շտապեցել են Կանոնադրութեամբ պահանջած 12 թուով: Ի պատիւ այդ ժողովի մնացեալ անդամների պարտաճանաչութեան և բարեկրթութեան, սիրում ենք կարծել, որ բողոքողների թիւն աւելի մեծ կարող էր լինել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներքին գործոց նախարարն առաջարկել է բոլոր նահանգապետներին անմիջապէս միջոցներ ձեռնարկել Ռուսաստանի քաղաքներն ու գիւղերը առողջապահական հարկ եղած պայմաններին համապատասխան կացուցանելու համար: Առանձին ուշադրութիւն է դարձրած Հաշտարխանի, որ տարափոխիկ հիւանդութիւնների բոյնն է, Բագուի և Անդրկովկասի շատ քաղաքների վրայ:

* * *

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ Նոբէլեան նաւթագործների «սինդիկատը» նոր գործ է ձեռնարկել. Նա կամենում է գրաւել Վոլգա գետով նաւթի փոխադրութիւնը, որի վերաբերութեամբ առաջարկութիւն է արել կառավարութեան: Այդ առիթով նիստ կար Պետերբուրգի «Առևտրական նաւագնացութեան» ընկերութեան մէջ, որտեղ Հաշտարխանի նահանգապետ գեներալ Տևյաշևը իւր բացատրութիւնները ներկայացրեց: Այդ բացատրութիւնների համաձայն ընկերութիւնը յայտնեց Նոբէլեան «սինդիկատի» ձեռնարկութեան վնասակարութիւնը ռուս սպառողների համար:

Մենք մեր կողմից հարկաւոր ենք համարում հաղորդել, թէ հաւանական է, որ «սինդիկատը» չբացուած, թառամի: Բագուայ՝ նորա անդամները միայն հիմա են հասկացել, թէ որքան սխալուած են մի «սինդիկատ» կազմելով, որտեղ Նոբէլի ընկերութիւնը հրամանատար է հանդիսանում բոլոր նաւթագործների վերաբերութեամբ և որ իրանց արդիւնագործութեան դատը պիտի որոշէ Նոբէլը: Այժմ, սինդիկատի անդամները և Նոբէլի ընկերութեան ներկայացուցիչները նոր խորհրդակցութիւն ունին Մոսկվայում նոյն առարկայի մասին:

* * *

Թիֆլիզից մօտ 10 վերստ հեռու գտնուող Լիսի փոքրիկ հայաբնակ վրախօս գիւղում աճա արդէն 6-7 տարի է որ հայոց եկեղեցի է կառուցանվում. շինութիւնն արդէն հասցրած է մինչև տանիքը. բայց գործն այդպէս կիսատ էլ մնացել է: Այդ եկեղեցու շինութեան համար նուիրատուութիւններ են հաւաքուած Բագւում և Թիֆլիզում թէ դրամով և թէ այլ նիւթեղէնով, որ սակայն յայտնի չէ թէ ո՛ւր են և ինչո՛ւ է եկեղեցու շինութիւնը դադարեցրած: Նուիրատուներից մէկը գործին գլուխ կանգնած անձանց ուշադրութիւնն է հրաւիրում այդ հարցերի վրայ:

* * *

Review of Reviws» շաբաթաթերթի փետր. 15-ի համարում զետեղուած է մի շատ գեղեցիկ պատկեր մեր անմահ բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի:

* * *

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ երեք հազար ռուբլի է հաւաքած հայ եկեղեցական դպրոցների համար նոր շինութիւն կառուցանելու. Հանգանակութիւնը շարունակվում է, իսկ շինութիւնը՝ դիտաւորութիւն կայ սկսել այս գարնան:

* * *

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են մեզ, որ այնտեղի Հոգևոր ծխական դպրոցի ուսուցչական խմբի մէջ ծագած անբաւականութիւնների պատճառով այս երրորդ շաբաթն է, որ դպրոցում դասաւանդութիւնն ընդհատուած է:

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 19 փետրվ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ամսոյս 7-ին կայացաւ տ'ղւոյս կայսերական համալսարանում տարեկան հանդէսը պրոֆ. Գէորգիևսկու կարդացած ճառից տեղեկանում ենք, որ 1893 թ. յունվարի 1-ին համալսարանում կային ուսանող 2306 մարդ և ազատ ունկնդիր . . 50

2356

Ըստ դաւանութեանց՝

Օրթօդօքս . . .	1706	(74%)
Կաթոլիկ . . .	226	(9, 81%)
Լիւտերական . .	209	(9, 01%)
Հրեայ	81	(3, 52%)
Հայ	30	(1, 31%)
Մահմեդական . .	12	(0, 52%)

Ըստ ֆակուլտետների՝

Իրաւաբանական.	1233	(53, 47%)
Մաթեմաթիկ. .	433	(18, 78%)
Բնագիտական. .	392	(17%)
Լեզուագիտակ. .	149	(6, 46%)
Արև. լեզուների .	99	(4, 20%)

Հայերը՝ ըստ ֆակուլտետների բաժանվում են.

Իրաւաբանական . . .	15	(50%)
Մաթեմաթիկական . .	10	(33%)
Բնագիտական . . .	5	(17%)

Ոչ լեզուագիտական և ոչ արևելեան լեզուի բաժանմունքներում չկայ ոչ մի հայ:

Հայերից՝ 14 թիֆլիզեցի են
5 երևանցի
3 ղարաբաղցի
2 ախալցխացի
2 քութայսեցի
1 նախիջևանցի
1 սղնախեցի
1 հաշտարխանցի
1 հիւսիսային Կովկասից:

Նոյն «հաշուից» իմանում ենք, որ պրոֆեսորական կոչման պատրաստուելու համար համալսարանի վարչութեան ցուցակներում գտնուող Սեբովբէ Պատկանեանցը, յայտնի հայագէտ պրոֆեսոր Քերովբէ Պատկանեանցի որդին՝ մի գէօլօգիական ճանապարհորդութիւն է արել Մեքսիկա, Հիւսիսային Ամերիկա և Սանդվիչեան կղզիները:

Պ. Պատկանեանցն արդէն գիտութեան մէջ յայտնի է իւր՝ օստեակների*) լեզուի, կեանքի և ժողովրդական գրականութեան (былины) ուսումնասիրութիւններով: Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ այս տարի պ. Պատկանեանցը մտադիր է ճանապարհորդութիւն անել Աւստրալիա, պապուասների**) լեզուի մէջ կատարելագործուելու համար:

Գ. Ե.

* * *

«Ս. Պետերբ. Վեդ.» լրագրում կարդում ենք Ֆինլանդիայի ներքին կեանքի դրութեան մասին հետևեալը. «Այս երկիրը, որ իւր ազգաբնակութեան քանակութեամբ հաւասար է ռուսաց մի նահանգին, ծածկուած է բազմաթիւ ստորին և միջին դպրոցների ցանցով, և բացի այդ ունի մի համալսարան, որ 250 տարի կեանք է վայելել: Այդ համալսարանի մէջ 1891 թուականին ուսել են 1,788 ուսանողներ, որոնց մէջ և 30 կին մարդ: Հէլսինգֆօրսի (Ֆինլանդիայի գլխաւոր քաղաքն է) պօլիտէխնիկումը (բազմարուեստանոց) իւր 128 ուսանողներով աւելի նպատակայարմար ծրագիր ունի, քան թէ ռուսաց «պօլիտէխնիկական» վարժարանները (ինստիտուտ): Ֆինլանդիայում կան նմանապէս ուրիշ մասնագիտական դպրոցներ՝ երկրագործութեան, նաւագործութեան և ծովագնացութեան համար: Լուսաւորութեան ծաւալման շնորհիւ, ֆինլանդական ազգը ունի և ծաղկեալ մամուլ: Օրինակ 1891 թուականին այդ երկրում 134 պարբերական հանդէս էր հրատարակվում, որոնցից 55—շվէդական լեզուով և 79—ֆիննական: Այդ փոքրիկ երկիրը միջոցներ է գտնում իրան ծաղկեալ դրութեան մէջ գնելու ըստ ամենայն մասանց: Օրինակելի են Ֆինլանդիայում գիւղական ճանապարհները, խճուղիները, ջրային ճանապարհները և երկաթուղիները: Կրակից ապահովութեան գործն այն աստիճանի զարգացած է, որ կրակից վնասուողը գրեթէ լրիւ ստանում է իւր վնասի համար բաւարարութիւն: Այս երկիրն ունի 95 բարեկարգեալ հիւանդանոց, որտեղ խնամվում են 16,140 հոգուց աւելի: Վերջապէս

*) Օստեանկա—Սիբիրիայի կիսավայրենի ազգ.

**) Պապուասներ—Աւստրալիայի միանգամայն վայրենի ազգ.

աղքատներին նպաստելու համար հարկ է հաւաքվում ժողովրդից, որի գումարը հասնում է 2,609,200 ֆիննական մարկի, իսկ այդ բարեգործութիւնից օգտվում է միջին թուով տարէն 76,800 հոգի»։

***

Պետերբուրգում կառուցվում է ի յիշատակ մաճուան Թագաւոր Աղէքսանդրը II-ի տ ա ճ ա ր յ ա ն ո ւ ն Յ ա ր ո ւ թ ե ա ն Ք ր ի ս տ ո ս ի։ լրագրների ասելով, այդ տաճարի համար կազմած է մի նախահաշիւ, որի մէջ ծախս է ցոյց տուած 2,078,600 ռուբլի։

***

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԵՐ ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԻՑՆԵՐԻՆ

—

Մեր պաշտօնակիցներից մէկին մի համեստ ընծայով պատուելու համար Ս. Էջմիածնի ճեմարանի ուսուցչական խմբից և աշակերտներից հաւաքած գումարը մնաց ցայսօր առանց գործադրութեան, ինչպէս յայտնի է, մեզանից անկախ և անյաջող հանգամանքների շնորհիւ։ Որքան որ մենք կարողացանք ստուգապէս տեղեկանալ՝ մասնակցող ընկերների մեծագոյն մասը կամենում է, որ յիշեալ գումարն անպատճառ գործադրուի այն նպատակի համար, որով հաւաքուած է։ Բայց ցանկալի էր իմանալ բոլոր մասնակցողների տրամադրութիւնն այդ խնդրի նկատմամբ, քանի որ առանց ընդհանուր հաւանութեան մեզանից ոչ ոք իրաւունք չունի այդ ընկերական գումարն այլ նպատակի ծառայեցնելու։

Որովհետև հնարաւորութիւն չունինք առանձին-առանձին իւրաքանչիւրի հետ գրագրութիւն սկսել այս գործի վերաբերութեամբ, ուստի խնդրում ենք մեր նախկին պաշտօնակիցներին հաղորդել մեզ շուտով իրանց կարծիքը, թէ ինչ գործադրութիւն կը կամենային տալ յիշեալ գումարին։ Մեր խօսքը մասնաւորապէս ուղղում ենք այժմ ճեմարանում ծառայող մեր նախկին պաշտօնակիցներին և նոյն ճեմարանից հեռացած նախկին սաներին, յիշեցնելով նոցա որ միւս մասնակցողների ստուար մեծամասնութիւնն իրաւունք չէ տալիս մեզ այդ գումարը մաս-մաս բաժանելու։

Մեր հասցէն՝ Թիֆլիզ, Ներսիսեան Դպրանոց։

Յ. Յովհաննիսեան.

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մեծարգոյ Խմբագիր.

Անհովիւ վիճակների դրութիւնն «Արձագանքը» նկարագրելով մատնանիշ էր արել այն անկարգութիւնները, որոնք հետզհետէ կարող են բազմանալ։

Այդ տխուր դուշակութիւնն արդարացնող մի փաստ տեղի ունեցաւ այսօր Թիֆլիզի եկեղեցիներից մէկում, որի վրայ հրաւիրում ենք հասարակաց ուշադրութիւնը։

Թիֆլիզի կենդրոնում գտնուող Քամոյենց կոչուած հարուստ եկեղեցում քահանայութիւն են անում երկու անձինք, որոնց մէկը բարեկարգիչ է և անդամ Կոնսիստորի, իսկ միւսը մեր միակ Հոգևոր Դպրանոցի կրօնուսոյց։ Այս այսպէս լինելով, պէտք էր, որ այդ եկեղեցում անկարգութիւն տեղի չունենար. բայց որքան եղաւ մեր զարմանքը, երբ ամսոյս 8-ին այդ եկեղեցին մտանք և ականատես գտնուեցանք մի տխուր երևոյթի։

Նախ ժամերգութիւնն ու երգեցողութիւնն անկարգ և խառնաձայն էր, երկրորդ՝ տիրացուն խնկարկում էր մի բուրվառով, որի մէջ ոչ կրակ կար և ոչ խունկ։

Ժամերգութիւնից վերջը ներկայ ժամաւորներից մէկը, մի հայ զինուորական, դիմեց ներկայ քահանային և յայտնեց իւր դժգոհութիւնը։

Բացատրութիւնից երևեցաւ, որ այդ եկեղեցում, ինչպէս և քաղաքի այլ եկեղեցիներում, քահանաները պաշտօն են կատարում հերթով, այդ օրը ժամ գալու հերթը եղել է բարեկարգչին ու Կոնսիստորի անդամին, որ մասնաւոր գործով զբաղուած լինելով, չէ կարողացել գալ ժամերգութեան, ուստի և հրաւիրել են ոչ-հերթապահ քահանային... իսկ գալով դատարկ բուրվառով խնկարկութեան, այդ բանը քահանայք ուշադրութեան արժանի չեն համարել. . .

Եթէ քաղաքիս կենդրոնում գտնուող և՛ կրթուած և՛ հարուստ դասակարգից յաճախուող եկեղեցում այսպէս են պահվում եկեղեցական կարգերը, ինչ կը լինի հեռաւոր անկիւններում։

Հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն այս տխուր երևոյթի վրայ։

Փաստաւոր։

***

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Նախիջևանցիք մեծ պաս - ախացք— ասելով և նորան գրկախառն ընդունելով մի բան էին սպասում նորանից։ Ժողովուրդը հասկանում է, որ ապաշխարութեան օրեր են. նա մասամբ ուրախանում էլ է, որովհետև դա տարուայ այն ժամանակամիջոցն է, երբ մարդ իրան զրկելով մարմնոյ սննդից, անհամբեր սպասում է պարարել հոգին և սիրտը Քրիստոսի փրկարար և կենսաւէտ վարդապետութեան քաղցր ձայնը լսելով։ Ահա այս քանի տարի է, Նախիջևանցին դատապարտուած է չլսելու եկեղեցու բեմից քաջ հովուի ձայնը, որով նա առաջնորդուէր դէպի ճշմարիտը, դէպի բարին, դէպի առաքինին։

Այս երրորդ կիրակին է, որ մենք զրկուած ենք Փրկչի Ս. Աւետարանի գոնէ լոկ բացատրութիւնից։ Եթէ առաջ պատահել են քարոզիչներ խօսելիս, ժողովրդի դրութիւնը նախանձելի է եղել եկեղեցում. նա ամբողջապէս մարմնացած լսողութիւն է դառնում, ականջը սրած, գլուխը քիչ թեքած մի քանի քայլ յառաջ է գալիս լսելու Ս. Աւետարանի ազնուացնող, մաքրող և սրբող՝ ճշմարտութեան, եղբայրսիրութեան վեհ գաղափարները։

Յիշում եմ սրանից մի քանի տարի առաջ երկու վարդապետ էր եկել տեղս. եթէ Նախիջևանցիք քարոզի ինչ լինելը գիտեն և նորա համն ու հոտն առել են, այդ նրանք պարտական են այդ երկու հարազատ որդիներին։ Նոցա քարոզին եկեղեցում ասեղ գցելու տեղ չէր լինում, մի ձայն, մի փսփսոց չէր լսվում—մարմնացած ունկնդրութիւն։ Նախիջևանցիք միշտ սիրով և յարգանքով են յիշում և մտաբերում այս երկու քաջ հովիւներին։ Ժողովուրդն արդէն քարոզի համն առել է և կարօտ է այդ բանին. ուրեմն, Արժ. հայրեր, քանդեցէք Ձեր լեզուն կաշկանդող այն ծանր շղթան, հանդէս դուրս եկէք Ձեր կարողութեան չափով, դիպէք ժողովրդի հոգու ժանգոտած լարերին, մաքրեցէք նորանց Մարիամի օրհնեալ իւղով, քաղցածին՝ հաց տուէք, ծարաւին՝ ջուր, մենք ուրիշից իրաւունք չունինք այդ պահանջելու, բայց Ձեզանից—այո, որովհետև Ձեզ ենք ճանաչում մեր հոգու դաստիարակ, Ձեզ ենք դիմում և այդ խնդրում։ «Լաւ է ուշ քան երբէք»։

***

23-ին փետրվ. 1893 թ.

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Պ. Խմբագիր.

Թոյլ տուէք Ղարաբաղի Թեմական դպրոցիս վարչութեան կողմից յայտնել Ձեր թերթի միջոցով խորին շնորհակալութիւն օր. օր. Վ. Լազարեանին, Ատովմեանին, պ.պ. Գ. Տէր Մ՛ինասեանին, Յ. Ջանումեանին և այն բոլոր անձանց, որոնք աջակցեցին յօգուտ դպրոցիս չքաւոր աշակերտների փետրվարի 4-ին տրուած երեկոյթին։

Մուտք յիշեալ երեկոյթից եղել է 333ռ., ծախք—143ռ. 90կ.։ Զուտ արդիւնք մնում է 189ռ. 10կ., որ և մանկավարժական խորհրդի որոշմամբ բաշխվում է դպրոցիս չքաւոր աշակերտներին։

Տեսուչ Ղար. Թեմ. դպրոցի՝

Լևոն Սարգսեանց։

4 մարտի 1893 թ.

Շուշի.

***

ԲԱԳՈՒԻՑ արժ. Գրիգոր քահ. Գրիգորեանցը խնդրում է մեզ հրատարակել հետևեալը.

«Տպագրութեան համար պատրաստվում է «Ս ո խ ա կ Հ ա յ ա ս տ ա ն ի» հրատարակութեան VI հատորը։

Նոյնպէս լոյս կը տեսնի, սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին, «Բագուի 1892 թուի խօլերային համաճարակի նկարագրութիւնը» խորագրով գրքոյկը»։

***

«Պրավիտելստվեննի Վեստնիկը» հաղորդում է, որ Պօդօլսկի նահանգում յունվարի 16-ից մինչև փետր. 1-ը խ օ լ ե ր ա յ ո վ բռնուել են 150 մարդ և վախճանուել 52 մարդ. Վօրօնեժի նահանգում յունվարի 8-ից մինչև փետր. 8-ը հիւանդացել են 42 մարդ և 18-ը մեռել են։ Խօլերան տակաւին բոլորովին չէ դադարած Վեատկայի, Սամարայի, Տամբովի, Ուֆիմի և մի քանի այլ նահանգներում։

***

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

—

Կիւրակէ, մարտի 7-ին, Քաղաքային Վարչութեան դահլիճում կայացաւ հրդեհի դէմ փոխադարձ ապահովութեան ընկերութեան ընդհանուր ժողովը։ Նիստը բացեց ճիշդ կէսօրին վերաստուգիչ մասնաժողովի նախագահ Վ. Ի. Կայդանովը, որ և ժողովի խնդրանօք ընդունեց ատենապետութեան պաշտօնը։

1892-ի ընթացքում 910,550 ռուբլու նոր ապահովութիւններ են տեղի ունեցել և 91-ն յունվար 1893 թուի ապահոված տների ընդհանուր գումարը հասել է 6,457,344 ռուբլու։ Ներկայացրած հաշիւը հաստատելուց յետոյ ժողովը քննութեան ենթարկեց ընկերութեան վարչութեան 1893 թուի նախահաշիւը։ Վարչութիւնը և վերաստուգիչ մասնաժողովը ներկայացրել էին 5130 ռուբլու նախահաշիւ։ Այս նախահաշիւը քննելիս ընկերութեան անդամ պ. Աբգար Յովհաննիսեանը ժողովի ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վրայ, որ կալուածքներ ապահովողների թիւը տարէ ցտարի շատ դանդաղ է աճում. նորերի թիւը 40—50-ից աւելի չէ լինում. որ Թիֆլիզում մօտ 10,000 շինութիւն կայ և այս թուից ընկերութեանս մէջ ապահովուած է ընդամենը 366 տուն. որ թէև կալուածքների ապահովութեան գումարը 6 միլիօն ռուբլուց աւելի է, բայց ապահովողների փոքր թիւը ցոյց է տալիս թէ որպիսի դժուարութեամբ է տարածվում փ ո խ ա դ ա ր ձ ապահովութեան գաղափարը ժողովրդի մեծամասնութեան մէջ. որ այս տեսակ ապահովութեան առաւելութիւնից օգտվում է միմիայն ազգաբնակութեան մի այնպիսի մասը, որի տների միջին արժողութիւնը 17,000 ռուբլի է, այն ինչ աւելի չքաւոր տանտէրերը, որոնք արտօնութեանց աւելի են կարօտ, չեն ըմբռնել տակաւին փոխադարձ ապահովութեան գաղափարը։ Աչքի առաջ ունենալով այս և համանման հանգամանքներ, պ. Յովհաննիսեանն առաջարկեց նախահաշուի մէջ մտցնել 500 ռուբլի ծախս այն գործակալներին վարձատրելու համար, որոնք ընկերութեան համար նոր ապահովողներ կը գրաւեն։

Այս առաջարկութեան դէմ խօսեցաւ քաղաքագլուխ իշխան Նիկողայոս Արղութեան - Երկայնաբազուկը, ասելով, թէ ընկերութեան համար անպատուաբեր է դիմել գործակալների ապահովողներ գրաւելու համար։

Բաւականին երկար վիճաբանութիւններից յետոյ ընդհանուր ժողովն ընդունեց նախահաշուի մէջ 500 ռուբլի մտցնելու առաջարկութիւնը։ Նոյն ժողովը որոշեց ընկերութեան հաշուապահ Բարսամեանցին (պ. Ա. Յովհաննիսեանի առաջարկութեամբ) մի հարիւր ռուբլի վարձատրութիւն տալ իւր աշխատանաց համար։

Այնուհետև ժողովն ընդունեց վարչութեան առաջարկութիւնը, որ այսուհետև ընկերութեան մէջ ապահովուած ծխնելոյզների մաքրութիւնը վարչութեան տեսչութեան ներքոյ լինի և այս նպատակի համար յատկացրեց 600 ռուբլի։ Միաձայն ընդունուեցաւ նաև վարչութեան այն առաջարկութիւնը որ 10% զիջումն լինի այն անդամներին, որոնք իրանց տներն անընդհատ ապահովում են ընկերութեան մէջ 5 տարի շարունակ։ Ապա սկսուեցան ընտրութիւնները։

Ընտրուեցան Բ. Ղանդուրալեանը—վարչութեան անդամ, պ.պ. Իզմայլեանցը և Եւանգուլեանցը—վերաստուգիչ մասնաժողովի անդամ, պ.պ. Փրիդոնեանը և Թամամշեանը – դիւնիչ մասնաժողովի անդամ։ Նիստը գոցուեցաւ 2 ժամին։

(«Կավկազ»)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՈՆԴՈՆ, 4 մարտի։

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Անշուշտ մի նոր լուր չէ, ասել թէ Լօնդօնն աշխարհիս ամենամեծ քաղաքն է և թերևս կը մնայ այսուհետև, ուր հինգ միլիօնի մօտ մարդիկ ի մի հաւաքեալ կ՚ապրին. և թէ այս հինգ միլիօն ասուն էակներու հետ՝ առ նուազն հինգ միլիօն էլ անասուններ՝ ձիեր կովեր, եզներ, ներկայացուցիչք աւանակաց սերունդին, ճէնթլմէններու հաւասար գամփռներ, լէյտիներու թուով շնիկներ ու փիսիկներ, երկոտանի և չորքոտանի արարածներ ի միասին հաշուելով տասն միլիօնէն շատ աւելի շարժող, շնչող, ուտող, արտադրող մշտաշարժ զանգուած մը կը դառնայ Լօնդօն։ Եւ այս ամեն կենդանեաց բազմաթիւ բաղդատմամբ անձուկ շրջափակի մը մէջ կենդրոնացած։

Մեծն Բրիտանիայի անհեթեթ այս ոստանի կեանքը, փառքն ու բարքը իրան պէս պէս նխշուն գոյներով տարօրինակ նորանոր և միշտ անսպառ նիւթեր մատակարարած է ինձ, զոր պատուական «Արձագանքի» մէջ նկարել կը ջանամ յաջէն ու ձախէն շարժելով հինցած վրձինս։

Բուն նպատակս Լօնդօնի քիչ շատ անծանօթ մնացած գոյներու համառօտ նկարագիրն է։ Բայց առանց մեր նպատակէն շեղելու, նախ իբրև կանխաբան պէտք է ասեմ, թէ ինչ բնական պատճառներ կան այսքան մարդոց բազմութիւն մէկ շրջափակի մէջ կենդրոնանալուն։

Թէպէտ Լօնդօնի արտասովոր մեծութեան պատճառը մասնաւորապէս անոր աշխարհագրական դիրքն է, բայց ինձ կը թուի թէ քան զայն աւելի, անգլիական ազգի բացառիկ յատկութիւնը լինի։ Անգլիացին մարդամեքենայ է յարաշարժ ու անմաշ՝ իւր խանձարուրէն սկսեալ տակուն կեանքի ու մրցման նախապատրաստեալ. մրցումն ըստ իս անգլիական բնաւորութեան ամենէն արմատական, ամենէն հզօր ու թաքուն զօրութիւնն է։ Կարծես թէ այս փոքրիկ կղզին շրջապատող ովկիանի մշտածուփ կոհակները տուած են այս դաս հին հին ժամանակներէ ի վեր, որով նախկին անգլիացին՝ բաղդախնդիր և յանդուգն ինք զինք ծովու անծայրածիր ծոցին ու ծփանաց մէջ ձգած գացեր, գացեր և ուր որ նոր ցամաք տեսեր, ուր որ ոտք կոխեր, Անգլիայի հետ, Լօնդօնի պոչին կապեր զայն ու վերադարձեր է, և այսպէս հետզհետէ Լօնդօնը գրեթէ երեք հարիւր միլիօն մարդոց մայրաքաղաք դարձեր է։ Անգլիացին ծովու վրայ՝ մարդաձուկ, խաւարակուռ Աֆրիկէի բոցակէզ կլիմայի տակ՝ աֆրիկեցի, հնդկաստանի մէջ հնդիկ մ՚է չարքաշ, Սեպերիացիի պէս տոկուն սառոյցէ մթնոլորտի տակ. հաստատամիտ, որչափ յամառ, յանդուգն՝ որչափ ձեռներէց, նպատակին հասնելու համար ամեն ընդդիմութիւն առ ոչինչ համարող, յաղթող կամ մեռնող։ Բնականաբար այս մրցման արշաւանքն ու արդիւնքները նիւթապաշտութեան, արհամարհանքների և մեծամտութեան բնաւորութիւն ալ տուած են իրան, այնպէս որ, այն որ անգլիացի չէ, նա կէս մարդ է իրանց համար։

Անգլիացին սառն բնաւորութիւն մ՚ունի իւր սեռին յատուկ գեղեցկայարմար կազմուածքի մէջ, տաք՝ իրանց ներքին կեանքի և իրանց համար. զարմանալի բան՝ և մերթ բանաստեղծ այս ոսկեստեղծ ժողովուրդ. ո՞վ կրնայ հաւատալ թէ Շէքսփիր, Բայրըն, Թէնիսըն անգլիացիներ են այս տարօրինակ կեանքի ու մթնոլորտի մէջ սնած. . .

—

Քանի մը պարզ թուեր Լօնդօնի դիրքի, շէնքի և սնունդի մասին։

Մայրաքաղաքն առ այժմ 700 քառակուսի մղոն տարածութիւն ունի. փողոցներ 30,000 մղոն երկարութիւն. քաղքի մէջ շրջան ընող երկաթուղիների զոյգ գծերը 750 մղոն տարածութիւն և անթիւ կայարաններ ունին. մօտ 800,000 տուն կայ, 1560 եկեղեցի, 7600 գինետուն, միայն «Լընտըն ճէնէռալ ընկերութեան հանրակառքերը տարին 43 միլիօն մարդ կը փոխադրեն», գետնի տակի ներքին և արտաքին երկաթուղիների գիծերը՝ տարին 120 մի-

ՖԵԼԻԵՏՕՆ

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ *)

(Դօկտօր Ա. Նիսէնի)

—

Տաճկաստանում, Եգիպտոսում և Պարսկաստանում բարգաւաճող հարէմը մի ընդհանուր արևելեան ստացուածք է, որ սաստիկ կաշկանդում է կրթութեան գործը։ Քանի որ Արևելքում գոյութիւն կ՚ունենան հարէմները, որոնք կանանց բանտերն են, Արևելքի կրթութիւնը, չնայելով դրա ակներև քայլերին, շատ յառաջ չի գնալ։ Քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը միշտ զուգընթաց է հասարակային կեանքի զարգացման, և քանի որ սա քնած է, Արևելքի թմրութիւնն էլ լուսաւորութեան գործի մասնական արդիւնքներով չի փարատուիլ։

Հարէմների գոյութիւնը, բոլորովին կղզիացած պահելով կնոջը, թոյլ չի տալիս Արևելքին հասարակային կեանքի ստուերըն անգամ վայելել այն իմաստով, ինչպէս որ մենք ենք հասկանում այդ կեանքը։ «Ամբողջ արևելեան հասարակութիւնը,—ասում է Տաճկաստանը լաւ ճանաչող մի գրագէտ,—տրոհուած է երկու ջոկ մասերի՝ տղամարդկանց և կանանց, որոնք երբէք չեն միանում իրար հետ։ Տղամարդիկ դուրս են ելել փողոց և բազար, իսկ կանայք փակուած են մնացել հարէմի ամուր պարիսպներում»։ Ճարպիկ կինը, կ՚աւելացնենք մենք, միայն ծածուկ հնարներով կարող է ազդել փոքր 'ի շատէ տղամարդկանց վրայ, այն էլ եթէ իւր մարդն ընդունակ լինի նրա մտքերը հասկանալու և միջնորդը լինելու։

Կնոջ բացակայ լինելն արևելեան հասարակութիւնից, որ բացառապէս արական սեռից է բաղկացած, տաղտկալի և միակերպ է անում դրան, զրկում է զուարթութիւնից ու պէսպիսութիւնից և անտանելի դարձնում մինչև անգամ տղամարդկանց համար։ Կնոջ ազնուացուցիչ ու ամոքիչ ազդեցութիւնը, որ այնքան նկատելի է եւրոպական հասարակութիւնների վրայ և որ ոչ միայն ընտանեկան բնաւորութիւն է տալիս նրանց, այլ և ցեմէնտի պէս ամրացնում,—իսպառ անյայտ է Արևելքին։ Այդ ազդեցութիւնը դեռ փոքր ինչ նկատելի է անապատի թափառական ցեղերի մէջ, որ կինը լիովին չէ մերժուած։

Արդի Տաճկաստանում և մանաւանդ Եգիպտոսում, որոնք ըստ երևոյթին բաւական յառաջ են գնացել քաղաքակրթութեան ասպարէզում, հարէմներն առաջուայ պէս ծաղկած են, չնայելով որ դրանց տէրերից շատերը եւրոպական համալսարանի ուսում ունին և սիրում են եւրոպացի ձևանալ։ Շատ ենք տեսել Կահիրէյում Սորբոնից և Օքսֆորդից վերադարձած երիտասարդ եգիպտացիք, որոնք իրանց նման եւրոպական ուսում առած, երաժշտութեան և լեզուների հմուտ օրիորդների հետ կարգուելով հանդերձ՝ հարէմի շրջանից չէին դուրս գալիս։

Մինչև որ այժմեան արևելցին, նոյն իսկ եթէ Եւրոպայի բոլոր ֆակուլտէտներն էլ անցած լինի, չգտնէ իւր մէջ այնքան կամքի զօրութիւն, որ համարձակուի դուրս հանել իւր կնոջը հարէմի անձուկ վանդակից և հրաւիրել նրան մասնակցելու հասարակային կեանքի բարիքներին,—ոչ մի յառաջադիմութիւն արմատ չի բռնիլ Արևելքում, և դա դարձեալ Իսլամի աշխարհ կըմնայ՝ հակառակ երկաթուղիներին, տելեֆոններին, ելեքտրական լուսին և մամուլին...

Աւելի քաղաքակիրթ արևելեան ազգերի, մանաւանդ տաճիկների և պարսիկների մէջ գերագոյն զարգացման հասած հարէմն այնքան չէ ծաղկում արաբական ազդեցութիւնից թեթև շօշափուած ազգերի մէջ և շատ աննշան տեղ է բռնում անապատի բնակիչների մօտ, հետևաբար արևելեան կնոջ ստրկութիւնը մի քանի աստիճաններ է ցոյց տալիս՝ սկսած լիակատար գերութիւնից մինչև այն ազատ դիրքը, որ վայելում է կինն աշխարհիս ամենակիրթ ազգերի մէջ։

Արևելցի կնոջ մարդկային արժանապատուութեան զգացմունքը ոչ այնքան թերակիրթ ազգերի մէջ է նկատվում, որքան կիսավայրենի ցեղերի մօտ, որոնք դեռ անծանօթ են արաբական լուսաւորութեան և անփոյթ են Կօրանի պատուէրները կատարելու։ Իսլամի ձեռով ընկճուած կնոջ անձնաւորութիւնն այն տեղ է աւելի աչքի ընկնում, ուր մզկիթները ու մօլլաները բազմաթիւ չեն և Կօրանը սակաւ են կարդում։

Քիւրդ աղջկայ և կամ Արաբիայի ու Սահարայի նօմադ դստեր կեանքի ընթացքը բոլորովին տարբեր է վերը նկարագրուած հարէմի գերուհու վիճակից։ Քիւրդ աղջիկը ծնվում է սովորաբար խիստ միաւորութիւն պահպանող ընտանիքի ազատ կնոջից. այդ կինը լուսէ լոյս աշխատող է և անծանօթ այն ոսկեզօծ վանդակին, ուր թառամում է հարէմի անգործ և դատարկապորտ գերուհին։ Աղջիկը մանկութիւնից սկսած սովորում է օգնել մօրը տնտեսութեան գործերում, նրա հետ միասին ջրի է գնում դէպի մերձակայ աղբիւրը, ցորեն է աղում շարժական աղօրիքի վրայ և կամ մնում է իւր բազմաթիւ հօտերի մօտ։ Հասակ առնելուց յետոյ նա լիովին անձնատուր է լինում իւր այծերին, գառներին, և շատ անգամ միայնակ անցկացնում ամողջ օրեր ու գիշերներ սարերի վրայ, կիրճերի մէջ, բնութեան գրգում և իրան շրջապատող անասունների շրջանում։ Հօր խաշինքը պահպանելիս նա ստէպ կռվում է ոչ միայն գայլերի, այլ և չար մարդկանց դէմ։ Քիւրդ աղջիկը. . . մի քընքուշ ծաղկի նման չէ աճում, այլ որպէս իւր վայրենի ցեղի հարազատ դուստրը՝ զարգանում է մի կտրիճ տղամարդու պէս—ուժեղ, առոյգ և խիզախ. այդ տղամարդու պէս նա էլ գիտէ սուր, դաշոյն և հրացան բանացնել. նա մի տեսակ ամազոն է, որ հանգամանքներին նայելով կարող է մի քաջարի զինուոր դառնալ։

Զարմանալի չէ ուրեմն, որ այդպէս աճած միշտ անվեհեր, միշտ ճարպիկ, միշտ զօրեղ և այծի նման՝ ժայռի մի սեպից դէպի միւսը թռչկոտելու վարժ քիւրդ կինը մասնակից լինի իւր ցեղի ոչ միայն խաղաղ զբաղմունքներին, այլ և ամենի կռիւներին։ Ի բնէ աւազակ քիւրդ տղամարդը շատ չէ սիրում երկրագործի ու հովուի անդորր կեանքը. նրա անդուսպ տենչն է՝ կողոպտել, ասպատակել, հարեւան տոհմերի կռիւներին միջամուխ լինել, երբեմն էլ նոյնիսկ սուլթանի զինուորների դէմ արշաւել։ Ուստի տղամարդկանց պակասը լրացնող ամազոնը մի հարկաւոր օգնական է, և ասպատակի ժամանակ զինուորների հրոսակի մէջ միշտ կը տեսնենք և՛ քիւրդ աղջկան։

Մի այդպիսի սպառազէն աղջիկ էր և մեզ Քիւրդիստանի մի անհաշտ անկիւնից անցկացնող պահապան վաշտի անդամը։

Ստէպ պատահել է, որ քիւրդ աղջիկները մասնակցել են արիւնահեղ կռիւներին և զէնք բռնած դիմադրել են թշնամու յարձակմանը, իրանց ընտանիքը, տնակն ու խաշները պաշտպանելով. . . Մինչև այսօր էլ Քիւրդիստանը լի է քիւրդ աղջիկների քաջագործութեան դէպքերով, և մի քանիսի հռչակաւոր անունները մինչև անգամ յաւերժացած են այդ լեռնաբնակ ժողովրդի երգերում։

Քանի որ քրդուհին աղջիկ է, նա էլ մերոնց պէս ազատ է, գուցէ աւելի ազատ, քան թէ մերոնք. բայց մարդու գնալուն պէս՝ նրա թևերը կտրվում են. Իրաւ է, նրան թանգ ապրանքի պէս չեն

*) Տես «Արձագանք» № 26.

լիօն, Թողունք զանազան ընկերութեանց հանրակառքերու և անթիւ կառաց փոխադրութեանց թիւն ու հաշիւ, որ զմեզ միլիոններու հոսանքին մէջ կը թողուն։

Իսկ թէ ինչպէս կը սնանի այս անհեթեթ կենդանին Լօնդօն, օրինակի համար, 800,000 կով կամ եզ, չորս միլիօն ոչխար, 40,000 … ձուկ, և այլն, իսկ այս ճաշին վրայ կը խմէ գինիի և գարեջրի անթիւ տակառներէն զատ, 31 միլիոն … միայն … և …

Բարե՜ ախորժակ… … հայոց աղաղի, Ռուսաց փոտկայի ազգականն է։

—

Կեանքի լոյս և մութ խաւերու մէջ մտնելէն առաջ, ընթերցողին համառօտակի ծանօթացնենք Լօնդօնի օդին, փողոցներուն, շէնքերու, շարժման և քանի մը անհրաժեշտ սովորութեանց հետ։

Եթէ Հայաստանի, Կովկասի կամ Հելուետիոյ բարձունքներէն հոս իջած ընկած ես, վա՜յ քեզ, Լօնդօնն սկզբումն անտանելի կը թուի իւր անել գիրքով ու անեզր սահմանով, կատարեալ լաբիւրինթոս մը իւր մութ գոյնովը, մառախլապատ կլիմայովն ու կեանքովն ընդհանրապէս։ Իսկ եթէ ձմրան եղանակին հանդիպած ես՝ արդէն ամառն յայտնի չէ, Լօնդօնի երկինքն ու երկիրը իրար կպած խառնուած չգիտես թէ օդի մէջն ես, թէ հաստատութեան վրայ. հազիւ երբեմն արուեստական արևակ մը՝ մանուկներու խաղալիկ մաշկէ կարմրաժեռ օդապարիկի պէս բան մը կը նշմարես, որ գլուխդ վերև սևաթոյր բարձրութեան մէջ մոլորած կը տատանի պահ մը և աներևոյթ կըլլայ միջօրէին։ Ձմրան օրը ցորեկն ընդհանրապէս երեք ժամ բնական լոյս չկայ, արուեստական լոյսեր են, որ աբեգակի պաշտօն կը կատարեն։ Մառախուղի եղանակին՝ … Բրիտանիայի մայրաքաղաքը գիշերուան մէջ շրջող գորշագոյն ահագին կրիայի մը կը նմանի, անհանդուրժելի տարտարոս մը, ո՛չ աչքիդ լոյսը, ո՛չ գազեր, ո՛չ ելեքտրիկը չեն կարող քեզ օգնել, ընդհանուր կուրութիւն մը կը տիրէ, ոտքերդ կեցած տեղը կը բևեռուին կը մնայ, թանձրացեալ մառախուղ շնչելով թոքերդ ալ թուլցած, թեւաթափ կը մնաս։

Կենդրոնի շէնք ու շինութիւնների ընդհանուր սև գոյնն ու մի օրինակութիւնը, հասարակաց հսկայ շէնքերը մանաւանդ՝ կարծես լաւաներու տակէն նոր ելած հազարաւոր տարուան հնութեանց դրոշմ ունին, փողոցները, մասնաւորապէս միջնաքաղքի (city) և անոր յարակից շէնքեր ու շուկաներ կազմող անձուկ ու մանուածապատ փողոցներ, անոնց արտաքին անշքութիւնը, անճաշակ ոճը գիտելով, մարդ պահ մը յուսախաբութեան կը մատնուի։

Օտարական մը, որչափ ալ երկայնամիտ լինի, եթէ անհրաժեշտ պարտականութիւն չունի Լօնդօն մնալու և միայն զբօսանքի կամ գիտական հետաքրքրութեան համար եկած է, և երբ … ու … և չգիտեմ քանի գոյն ունեցող … եղանակին պատահելու դժբաղդութիւն ունեցած է, վարկեան մ՚առաջ գերեզմանական այս աշխարհէն խուսափելու հնար կը փնտրէ, մայրաքաղաքին խոստացեալ ամեն բարիք, գանձն ու վայելք անգլիացւոց թողլով յօժարութեամբ։ Սակաւաթիւ չեն այս կարգի և այս եղանակին հանդիպող ուղևորներ, որ մի քանի օր հազիւ Լօնդօն մնալու դատապարտութիւն կրել կուգան, և երբ անկէ դուրս կ՚ելնեն, որպէս դժոխքէ խուսափած, ալ կըսկսեն սև Լօնդօն ու ճեմակ լօնդօնցիները պէսպէս գոյներով ներկել։

Այսուհանդերձ Լօնդօնն իրօք ՄԵԾ քաղաք է՝ ոչ միայն բնակիչների արտասովոր թուովը, կենդրոնացեալ շարժմամբն ու անհուն գանձերովը, այլև իւր շէնք ու շնորքով, իւր թաքուն հրաշալիքներով, իւր յատուկ գեղեցկութեամբ ու հաճոյքներով։ Գեղեցկութեան ու տգեղութեան, հարստութեան ու աղքատութեան, երջանկութեան ու թշուառութեան միակ մեծագոյն ներկայացուցիչն է Լօնդօն, զորս գիտելու դատելու համար բաւական ժամանակ ապրելու է հոն։

Ս. Տէփէնց։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիայում ահագին քաղաքական նշանակութիւն ունեցող անցքերն անդադար յաջորդում են միմեանց. հէնց որ մօտենում է որևէ նշանաւոր գործի վախճանը, իսկոյն մի այլ դէպք է հանդէս գալիս, որ այնուհետև բաւական ժամանակ կլկին բացառապէս գրաւում է հասարակական կարծիքի ուշադրութիւնը։ Շատ չէ անցել որ մենք աշխատեցինք ցոյց տալ փիլ Ֆեռիի սենատի նախագահ ընտրուելու փաստի քաղաքական կարևորութիւնը, և ահա այսօր պիտի հաղորդենք նորա մահուան լուրը, որ ինքն ըստ ինքեան դարձեալ մի մեծ դէպք է Ֆրանսիայի արդի քաղաքական կեանքի մէջ։

Երրորդ հասարակապետութեան գործիչներից Գամբետտայից յետոյ՝ գուցէ ոչ ոք այնքան արժանի չէ Եւրոպայի ընդհանուր ուշադրութեանը, որքան փիլ Ֆեռին։ Որպէս տաղանդաւոր քաղաքագէտ և անձնուէր ու անկաշառ հայրենասէր Ֆեռին կարողացաւ կազմակերպել ամենազօրեղ կուսակցութիւնն արդի Ֆրանսիայում և այդ կուսակցութիւնը ամենից շատ բան է արել հասարակապետական ռեժիմի ամրացման ու հաստատութեան համար։ Տօնկինի խնդրում Ֆեռին պարտութիւն կրեց և հեռացաւ քաղաքական ասպարէզից. նորան ատում էին, բայց արհամարհել չէին կարողանում. Թըշնամիներ շատ ունէր, բայց նոցանից ոչ ոք չկարողացաւ ուրանալ որ և է բանով նորա անունը, նորա ազնւութիւնը մնաց անբասիր։ Ցիշենք հէնց Պանաման, որի պատճառով գրեթէ բոլոր փոքր 'ի շատէ յայտնի գործիչների վարկն ընկաւ, գոնէ չմնաց մէկը, որի վրայ տեղի թէ անտեղի կասկած չձգուէր։ Ֆեռիի անունն անգամ տուող չեղաւ այդ խայտառակ գործի մէջ, և թերևս այդ հանգամանքն էլ նպաստեց նորա յանկարծական բարձրանալուն, նորա՝ սենատի նախագահ ընտրուելուն։

Կարնոյի նախագահութեան ժամանակը լրանալուց յետոյ Ֆեռին մեծ հաւանականութիւն ունէր ընտրուելու հասարակապետութեան նախագահ. գոնէ նորա անուան հաւասար մի այլ չէ լիշվում ցայսօր։

Եւ ահա անակնկալ մահը խլում է նորան Ֆրանսիայից անշուշտ մեծ ցաւ պատճառելով ճշմարիտ հայրենասէր ֆրանսիացիներին։ Սակայն շատ հաւանական է որ Ֆեռիի մահից յետոյ նորա ստեղծած կուսակցութիւնը ոչ միայն շարունակէ իւր գոյութիւնը, այլ և աւելի զօրանայ։ Մօտիկ ապագան ցոյց կը տայ թէ ինչ գործիչ կորցրեց Ֆրանսիան յանձին փիլ Ֆեռիի։

—

ԱՆԳԼԻԱ.—Գլադստոնը հիւանդացել է և այդ պատճառով իռլանդական ինքնավարութեան օրինագծի երկրորդ ընթերցումը պատգամաւորների ժողովում տեղի կ՚ունենայ ոչ թէ մարտի կէսին, ինչպէս որ մտադիր էր անելու Գլադստոնը, այլ Զատկի տօներից յետոյ։

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ. — Տռնովի Կլիմենտ մետրապօլիտին Ստամբուլովը զրկել է աթոռից և բանտարկել է տուել նորա համար, որ այդ եպիսկոպոսը ձայն է բարձրացրել իւր եկեղեցու ոտնակոխ արած շահերն ու իրաւունքները պաշտպանելու։ Այդ բռնութեան դէմ բողոքել են Կ. Պօլսի բուլղար էքզարխը և Բուլղարիայի բոլոր մետրապօլիտները։ Սոքա բացատրում են Ստամբուլովին, թէ ինչ վտանգաւոր գործ է մի ազգի եկեղեցական իրաւանց դիպչելը։ Մինչև անգամ Բ. Դուռը վրդովուած է Կլիմենտ մետրապօլիտի հետ այդպէս վարուելու համար, վտանգաւոր քայլ համարելով իշխան Ֆերդինանդի կառավարութեան կողմից այդպիսի մի համարձակ վարմունք։

—Իշխան Ֆերդինանդը, որ այժմ արդէն Սօֆիայումն է, այցելութիւն է արել Վիեննայում տաճկական դեսպանին և յայտնել է իւր շնորհակալութիւնը սուլթանի՝ իշխանի ամուսնութեան առիթով քաշած շնորհաւորական հեռագրի համար։ Սօֆիայում իշխանն արդէն հրովարտակ է հրատարակել մեծ ազգային ժողովի ընտրութիւնների վերաբերութեամբ, որ տեղի պիտի ունենան ապրիլի կիսին։ Իշխան Ֆերդինանդի նշանածը, իշխանուհի Մարի-Լուիզը, որ այժմ Փարիզումն է, պիտի Պետերբուրգ գնայ, ինչպէս ասում են, որպէսզի աշխատէ այնտեղ հաշտեցնել Ռուսաստանին Բուլղարիայի այժմեան կառավարութեան հետ։

—Բուլղարական կառավարութիւնը պատրաստել է տալիս հինգ մեծ զրահակիր նաւ Բուլղարիայի ծովեզերքի պաշտպանութեան համար։

—

ՍԵՐԲԻԱ.—Արտասահմանեան լրագրները ռուսաց վրայ ամեն տեսակ մեղադրանքներ բարդելով ի միջի այլոց հաստատում են, թէ նոքա դրամով ձեռք են բերում սլաւոնական երկրում իւրեանց կուսակիցներին։ Այս տեսակ մեղադրանքը 'ի վաղուց հետէ բռնանում է և Սերբիայի ծայրայեղ ազատամիտ կուսակցութեան վրայ, որ այնտեղ «արմատական կուսակցութիւն» է անուանվում։ Քանի մի ամիս առաջ «արմատականների» ձեռքին էր նախարարութիւնը, որից նոքա զրկուեցան։ Այժմ լինելու են պարլամենտական նոր ընտրութիւններ և, ինչպէս երևում է, արմատականների ձեռքում բաւական դրամ կայ և իբրև թէ արմատականներն այդ դրամը նպաստ են ստանում ռուսներից։ Եւրոպական լրագրները մինչև անգամ հաղորդեցին, որ Սերբիայի արտաքին գործոց նախարարը ռուսական դեսպան պ. Պերսիանին այդ մասին դիտողութիւններ է արել։ Այժմ սերբիական կառավարութիւնը հրատարակում է, թէ վերոյիշեալ լուրը, որ նա դիմել է պ. Պերսիանուն իւր դիտողութիւններով, բոլորովին անհիմն է։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Մարտի 6-ից.

ԲԵՐԼԻՆ.—Զինուորական յանձնաժողովը վերջացրեց զինուորական նախագծի երկրորդ ընթերցումը և մերժեց բոլոր ձայների մեծամասնութեամբ 6 ձայնի դէմ, որոնք պահպանողականներին են պատկանում. այնուհետև յանձնաժողովը մերժեց և միւս բոլոր առաջարկութիւնները։ Մօտակայ նիստը, որտեղ կըկարդացուի տեղեկագիրը, տեղի կ՚ունենայ Զատկից յետոյ։ Օրինագծի երկրորդ ընթերցումը բացասական հետևանք ունենալու համար ռայխստագի արձակումն անխուսափելի է համարվում։ Այնուամենայնիւ արձակումը տեղի կ՚ունենայ օրինագծի քննութեան ենթարկելուց յետոյ։

Երէկ այստեղ ժամանեց Մեծ Իշխան Կոնստանդինը, և իջաւ ռուսաց դեսպանատանը։ Առաւօտեան 9-ը ժամին կայսրը Մեծ Իշխանին մի երկարատև այցելութիւն արեց և յետոյ Իշխանն ընդունեց շատ բարձրաստիճան մարդկանց։ Ժամը 1-ին Մեծ Իշխանն այցելեց կայսրուհուն, իսկ ցերեկուայ ժամը $3^3/_4$-ին մեկնեց Վայմար։ Պահպանողական պատգամաւորներ՝ Ֆրիզէն, Համերշտան և Մեններտ ուրիշ 30 պատգամաւորի համաձայնութեամբ առաջարկում են, որ կառավարութիւնն մի օրինագիծ առաջարկէ, որով Գերմանիայի ոչ հպատակ հրեաներին Գերմանիա գաղթելն արգելուի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երէկ Էդինբուրգի հերցոգուհին իւր աղջկայ հետ ուղևորուեցաւ արտասահման։ Նոյին Կայսերական Տան անդամները ճանապարհ դրեցին նրանց։

—«Գրաժդանինի»-ը հաղորդում է, որ ճանապարհների նախարարութիւնը որոշել է առողջապահական նպատակով աչքի անցնելու բոլոր երկաթուղիները։

ՓԱՐԻԶ.—Սենատի նախագահ Ժիւլ Ֆեռին վախճանուեցաւ երեկոյեան $6^1/_2$ ժամին սրտի հիւանդութիւնից, որ նա ստացել էր 1888-թ. յունվարին նրա անձի դէմ սպանութեան փորձի ժամանակ։ Այն ժամանակ ատրճանակի գնդակը կողի ոսկռի մէջ նստելով վնասել էր սրտի ներքի մասը։ Բազմաթիւ քաղաքական գործիչներ հաւաքուել էին երէկ Ֆեռիի տան շուրջը, որտեղ մուտք գործելը դժուար էր։

—Պանամայի գործը.—Բարդուն շարունակելով իւր պաշտպանողական ճառը, պնդում է, որ Լըսեպսին անյայտ է եղել Ռայնակին տուած գումարների գործադրութեան նպատակը, իբրև կաշառող կարելի չէ մեղադրել Լըսեպսին, և վերջումը դիմում է նա երդուեալների խղճին, և խնդրում տալ փառաւոր անուան վերականգման վճիռը (աղմկալի ծափահարութիւններ)։

Կ. ՊՈԼԻՍ.—Ծխախոտի մենավաճառութեան ընկերութիւնից Դուռը փոխառութեամբ ստացել է 1,500,000 ֆունտ ստերլինգ, որ մասամբ գործ պիտի դրուի ռուսաց հպատակներին պարտք մնացած վարձատրութիւնների վրայ։

ՎԻԵՆՆԱ.—Բայխստագին առաջարկուած է Աւստրիայում ընդհանուր ընտրողական իրաւունք մտցնելու համար մյադօչեկների առաջարկը։ Այդ առաջարկութեան մէջ մատնացոյց է արուած, թէ 400 պատգամաւորները հետևեալ կերպով պէտք է բաժանուած լինին. 244 սլաւեաններ, 145 գերմանացիներ և 11 իտալացիներ. սլաւեան պատգամաւորները բաժանվում են իրանց մէջ այսպէս. 92 չեխեր, 63 լեհացի, 52 ռուսիններ, 21 սլօվակ, 12 սերբ-խորվատ և 4 ռումինացի։

Մարտի 7-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Առանձին յանձնաժողովի տուած հաշուի առիթով հրատարակուած է Բարձրագոյն ռեսկրիպտ, որով յայտնուած է շնորհակալութիւն Թագաժառանգին և առանձին յանձնաժողովի անդամներին, նոյնպէս և այն անձերին, որոնք կատարել են նրա յանձնարարութիւնները և այն ամեն մարդկանց, որոնք օգնել են ժողովրդի կարիքը թեթևացնելու գործին։ Կայսրն ընդունելով ս. սինօդի շնորհակալութեան թուղթը, որով ս. սինօդը շնորհակալութիւն է մատուցանում պետական գանձարանից գիւղական քահանաներին հասցրած օժանդակութեան համար, սեպհական ձեռքով գրեց. «Սրտանց՝ շնորհակալ եմ ս. սինօդից արտայայտած զգացմանց համար. լիովին ուրախ կը լինիմ, երբ ինձ յաջողուի ապահովացնել գիւղական բոլոր հոգևորականութեան գոյութիւնը»։

«Նով. Վր.»-ն լսել է, որ բնակարանների վրայ դնելիք հարկի նախագիծը վերջնականապէս հաստատուած է օրէնսդրական կարգով։

Բնակարաններից հարկահանութիւնը կըսկսուի ինչպէս ասում են 1894 թուականից։

ՓԱՐԻԶ.-Նախարարների խորհուրդը վճռեց Ֆեռիի թաղման համար պետական գանձարանից տալ 20,000 ֆրանկ։

Մարտի 8-ին

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Զինուորականբժշկական ակադեմիայի տարեկան հանդէսին յիշուեցաւ, որ ակադեմիայի 258 ուսանողները մասնակցել են խոլերայի դէմ մաքառման գործին, որոնցից երեքը համաճարակին զոհ են գնացել անձնուիրաբար իրանց պարտքը կատարելու միջոցին. վճռած է յաւերժացնել նրանց յիշատակը։

Վօլգա և Դօն գետերի բերանը սառուցից ազատուած է։

ԽԱՐԿՈՎ.—Ջրի արտակարգ յորդութիւնից քաղաքի այն մասը, որ գետի կողմն է, ջրով ողողուել է. հաղորդակցութիւնը նաւակներով է լինում։

ԼԻԲԱՒԱ.—Կուրլանդիայի ափերի մօտ ծովի մէջ սառուցից բռնուել էին մօտ 40 շոգենաւ, որոնք այժմ սկսվում են ազատուել. շոգենաւերից շատերը վնասուած են։

ՍՕՖԻԱ.—Դատարանը քննում է Գէօրգևի գործը, որ մեղադրվում է իշխան Ֆերդինանդի և Ստամբուլովի դէմ եղած դաւադրութեան մէջ մասնակցութեան համար։

—

Երկրորդ փոխառութեան վիճակախաղի տոմսակներից տարել են

ՀԻՆԳՀԱԶԱՐԻԻՐԱԿԱՆ ՌՈՒԲԼԻ

№№ տոմս.	№№ սերիա.	№№ տոմս.	№№ սերիա.	№№ տոմս.	№№ սերիա.
7,404	2	19,767	31	13,743	2
9,536	48	4,603	9	4,065	17

վաճառում հարէմի տիրոջը, նա կարող է ազատ ընտրել փեսային և սովորաբար իւր հաւանածին է մարդու գնում, բայց և այնպէս օրհասական փրկանքը, որ երբեմն մեծագին է և աղջկայ գեղեցկութեան համապատասխան, արդելք է լինում նրա ու փեսայի զուարճութեան, եթէ փեսան անձեռնհաս է փրկանքի գինը վճարելու։

Սակայն երիտասարդ քիւրդն ու քրդուհին փափկասէր Թիւրքի նման անտարբեր էակներ չեն. եթէ երիտասարդն անկարող լինի օժիտ վճարել աղջկայ համար, նա քաջօրէն կը փախցնէ նրան հօր տանից, և աղջիկն անձամբ կ'օգնէ երիտասարդին այս վտանգաւոր գործի մէջ։ Այս աւանդութիւնը թէև կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ, մինչև անգամ գերդաստաններ, երբեմն էլ ամբողջ ցեղեր տոհմային վրիժառութեան գրգռել,—բայց միշտ կռուելու պատրաստ քիւրդն այդպիսի բաներից չէ վախենում։

Պատահում են դէպքեր, որ մի քանի տոհմեր միասին փրկանքի գին են հանգանակում մի ուրիշ տոհմի պատկանող աղջկայ հօրը վճարելու համար, որպէսզի այդպիսով միջոց տան իրանց որևէ կտրիճին իւր սրտի ընտրածի հետ միանալու։

Մի գիշեր ես եփրատեան Տաւրոսի մի վայրենի կրճում սաստիկ հրացանաձգութեան շրջանակի մէջ ընկայ։ Հրացանների պայթիւնը մեր կարաւանի վրայ յարձակուելու նշան կարծելով, ես փութացի յետ քաշուիլ կրճից. սակայն սխալս շուտով պարզուեցաւ։ Իմացանք, որ մի տոհմի քիւրդեր սպասելիս են եղել մի ուրիշ տոհմի քիւրդերին, որոնց մէկը աղջիկ է յափշտակած եղել իրանց միջից։

Քիւրդ աղջիկը սիրուց շարժուած մարդու գնալով՝ գէթ վայելում է մի տեսակ երջանկութիւն, որից զուրկ է առհասարակ հարէմի թիւրք գերուհին։ Ճշմարիտ է, որ արամբի քիւրդ կնոջ կեանքն էլ թեթև չէ. շատ անգամ կարիքը ստիպում է նրան առանց մէջքն ուղղելու աշխատել. այսուամենայնիւ նա ունի գոնէ ազատ մանկութեան յիշատակներ, նա աշխատում է իւր տան համար, և այդ արդէն բաւական սփոփիչ բան է, մանաւանդ որ նա տեղիք չունի վախենալու ո՛ր և է հակառակորդ կնոջից։ Ճշմարիտ է և, որ նա պարտաւոր է հնազանդ լինել իւր մարդուն և չընդդիմանալ նրա կամքին. բայց և այնպէս քիւրդ կնոջ հլութիւնը բնաւ նման չէ այն կատարեալ ստրկութեան, որով կաշկանդուած է աւելի կրթուած արևելեան աղջերի կինը։ Քիւրդ կինն անմիջապէս աջակցում է իւր 'ընտանիքի ու երդիքի պաշտպանութեան սուրբ գործին, և թիւրքերը կարող են պատմել, թէ սուլթանի ասկերներից քանիսն են ջարդուել և կոտորուել քիւրդ կանանց զէնքերով։

Շատ անգամ եմ հիւր եղել ծիծեռնակի բնի նման ժայռի լանջքին ամուր կպած քիւրդի գիւղում, և սիրով դիտել նորատի քրդուհիներին, որոնք արշալուսից մինչև արևի մայր մտնելը բան էին անում իրանց սևլտակ խրճիթների ներսն ու դուրսը։ Քրդուհին մի ժրաջան կնոջ պէս միշտ զբաղուած է. մերթ նա օրօրում է երեխաներին, մերթ կերակուր է պատրաստում, մերթ իւր տիրոջ զէնքն ու նժոյգը մաքրում, մերթ գոյնզգոյն կապերտ գործում, և չնայելով այս անդուլ աշխատութեան՝ նա միշտ զուարթ է և անհոգ հնչեցնում է իւր հայրենի երգերը, որոնց մէջ ստէպ կը լսես և' տրտունջ և' վշտահար հառաչանք։

—

Հէնց այդպէս է, եթէ ոչ աւելի ազատ, և' Թիւրքմէնի աղջիկը, — նոյն Թիւրքի, որ սակայն Արևելքի քաղաքակրթութեան պտղի համը չէ տեսել։ Հարէմի շղթաներից բոլորովին ազատ Թիւրքմէն կինը չէ ծանօթ և քօղի հետ. նա քօղ հագնում է միայն ամուսնութեան առաջին օրերը և յետոյ դէն է ձգում, նուիրուելով տնային ծանր գործերին, որոնք միշտ վիճակվում են վրանաբնակ կնոջը։ Տղամարդկանց ընտրութեան մէջ Թիւրքմէն աղջիկը քիւրդ աղջկանից էլ ազատ է։

Լաւ եմ յիշում իմ այցելութիւնը մի Թիւրքմէն աուլի, որ նստած էր Ասխաբադի մօտերքում, Կոպէտ դաղի ստորոտում։ Մենք աուլ մտանք մեր ջիգիթների հետ միասին մի ինչ որ տօնի ժամանակ և հիացած մնացինք մեզ դիմաւորող երիտասարդների վաշտի վրայ, որոնց թւում և բազմաթիւ մերկերես աղջիկներ կային։ Լսեցինք, որ աուլը հարսանիք է տօնում և հարսը նոր է տարուած դէպի իւր առագաստը։ Ջիւրերի դէմքը վառուած էր. երիտասարդները նոր էին վերադարձել հարսին աւանդող փեսային հետամուտ լինելուց։ Թէև աղջիկ հափշտակելու սովորութիւնը վաղուց անհետացել է Թիւրքմէնների մէջ, բայց նրանք դեռ պահպանել են գոնէ ձևի համար հարսին փախցնելու սովորութիւնը, և փեսան յափշտակում է նրան, չնայելով որ արդէն վճարել է ծնողներին աղջկայ գինը և նրանք արդէն պատրաստուել են հարսանիքը տօնելու։ Փեսան 'ի հարկէ հնար է գտնում փախցնելու հարսին, իսկ ծնողներն ու բարեկամները հնար են գտնում բռնելու զոյգին, չնայելով որ փախչողները դիմադրում են։ Այս կեղծ ընդհարումների ժամանակ հրացաններ արձակելուց և սուրեր ճօճելուց յետոյ՝ ամեն բան վերջանում է հաշտութեամբ, և առևանգողը և նրա առևանգած սիրուհին ուրախ-ուրախ գնում են իրանց սպասող մօլլայի մօտ։

Թիւրքմէններն ունին և մի ուրիշ հին սովորութիւն. այդ է նոր ամուսիններին անմիջապէս հարսանիքից յետոյ մի քանի շաբաթով բաժանելու սովորութիւնը։ Հարսին տանում են իւր ծնողների վրանը կամ տաղաւարը, և փեսան իրաւունք է ստանում միայն երբեմն, այն էլ իբրև մի օտար մարդ, տեսակցել իւր կնոջ հետ ծնողների ներկայութեամբ։ Դրանից յետոյ՝ էլ երկար չէ տևում Թիւրքմէն կնոջ նորասէր ամիսը. նա էլ քիւրդ կնոջ պէս պարտաւոր է ամբողջ կեանքն աշխատել, օգնելով մարդուն և գրեթէ ամեն բան նրա փոխարէն անելով։ Վրանաբնակ Թիւրքմէնը երբեմն այնպէս ծոյլ է, որ տան գործերի բոլոր բեռը կնոջ վրայ է ծանրացնում, մինչդեռ ինքը վրանում ընկած՝ միայն մածուն է վայելում։

—

—Արդեօք ձեր խաղիկներն էլ այծ ու ոչխար արածեցնում են,—հարցրեց ինձ մի ջահել բէգուրին աղջիկ, որին հանդիպել էի Մօսուլից դէպի ծովն իջնող լեռնային զառիվայրում. նա հովվում էր իւր հօր հօտը։

Ես բացասական պատասխան տուի։

—Ուրեմն ինչո՞վ են պարապում նրանք, երևի թէ քնում են իրանց հայրենի վրանում,—հետևեցրեց անապատի պարզ աղջիկը, անկարող լինելով երևակայել մի այնպիսի կեանք, որ կարելի լինէր հովւութիւն չանել։

Երբ ասացի նրան, թէ մեր աղջիկներն էլ աշխատում են, տնտեսում են, կար են անում ու կարդում, բէգուրին աղջիկը հնչուն ձայնով ծիծաղեց.

—Տանը աշխատելը կանանց գործն է և ոչ թէ աղջիկների. թող կարթայ շէյխը կամ մօլլան. աղջկայ բանն է՝ ազատ լինել մեր անապատի արագոտն վիթի պէս։

Փ. Վ.

(Կը շարունակուի)

12,562	23	19,080	40	4,111	11
19,113	50	12,532	38	17,978	50
19,021	14	8,748	48	14,968	48
100	48	4,988	23	13,033	49
4,758	40	6,863	40	7,419	35
13,052	21	4,799	34	2,365	32
15,305	2	18,235	40	18,611	29
2,728	46	13,634	15	8,897	15
5,797	39	6,802	12	9,032	26
12,329	9	2,421	25	3,022	12
7,896	30	5,241	32	7,412	22
1,894	22	18,337	25	16,998	1
4,531	7	12,216	35	13,901	41
1,748	37	52	1	8,153	35
14,288	7	18,882	35	2,527	7
4,059	22	12,637	21	8,301	18
2,659	20	3,262	46	19,255	7
15,272	31	8,755	6	5,667	1
7,444	2	8,809	22	14,179	28
19,160	23	3,542	22	4,121	32
7,524	36	2,202	41	13,396	41
12,703	50	427	5	3,747	6
6,371	25	3,305	21	7,002	28
11,537	38	11,041	37	10,156	18
4,309	48	18,311	25	9,911	1
8,790	49	11,648	6	13,064	9
13,836	8	7,793	16	10,483	42
5,173	46	1,311	35	4,768	10
7,745	10	19,652	34	944	34
8,964	38	6,653	13	7,225	15
13,188	19	19,609	14	11,635	17
17,308	38	1,704	35	15,640	47
12,630	29	14,591	38	847	24
17,201	13	13,294	1	6,791	31
8,778	8	18,943	31	2,715	14
9,859	21	12,689	14	1,764	13
3,004	16	6,992	16	13,158	34
18,620	18	13,957	14	11,758	41
15,569	12	17,674	26	4,815	50
6,762	18	19,936	42	9,678	45
13,270	41	4,642	20	11,803	8
19,329	27	18,077	19	11,733	30
9,092	11	6,096	40	17,594	48
3,134	13	4,614	48	11,932	37
12,090	41	16,841	4	9,660	21
5,983	12	6,788	15	19,210	4
11,657	33	14,336	47	5,185	2
18,750	47	1,973	44	9,093	27
4,690	47	16,278	50	15,987	22
15,817	32	14,463	5	15,064	31
9,840	12	4,413	38	12,253	12
17,449	3	12,614	27	1,535	16
7,946	37	19,680	9	2,568	35
8,771	7	16,930	27	4,588	16
2,842	43	9,575	37	19,873	38
3,632	7	19,348	16	6,685	8
764	19	6,132	10	19,137	48
13,816	44	7,792	18	14,259	37
9,166	37	2,742	40	8,532	31
14,713	25	11,576	25	6,477	32
2,768	15	1,357	21	14,819	24
12,089	3	717	39	3,276	43
6,827	15	1,558	21	6,152	4
16,871	5	13,543	7	13,887	43
1,354	13	19.065	6	636	35
10,950	26	9,203	21	14,240	20
2,063	49	13,205	13	8,756	31
3,313	27	2,185	6	2,022	35
15,146	41	11,742	45	1,734	35
15,000	2	18,208	47	1,148	8
3,096	5	1,591	16	12,111	46
11,273	26	1,245	32	4,551	48
12,761	45	11,256	49	15,016	22
8,325	23	15,950	3	17,033	9
1,774	23	2,124	12	4,663	11
10,261	50	16,200	35	12,724	33
16,802	47	7,033	33	12,061	4
16,687	31	15,343	32	8,766	19
6,599	1	12,806	41	4,741	41
410	44	8,546	8	14,037	8
11,601	23	14,161	41	5,810	41
6,161	48	13,764	28	6,623	1
3,381	34	12,409	12	10,239	25
3,034	14	4,818	43	7,750	38
5,386	34				

Հետևեալ սերիաներ №№ շրջուցած են.

12,096	611	18,383	15,187	15,815
2,490	15,415	7,875	5,251	9,905
14,504	11,301	3,842	1,553	3,536
9,602	13,005	18.583	8,128	15,689
2,532	18,062	3,333	3,289	2,736
11,464	3,785	18,352	1,524	19,744
10,625	14,143	8,952	7,256	16,695
2,057	3,567	3,037	16,413	12,726
14,391	8,187	18,407	11,833	17,359
16,055	8,823	13,611	4,951	14,747
18,088	12,023	12,321	6,788	468
9,816	15,735	13,470	5,487	13,830
13,407	4,349	9.477	7,879	18,331
3,273	16,718	12,982	10,562	2,498
8,497	15,064	8,176	8,843	19,362
16,585	3,517	5,063	16,686	373
11,826	16,977	8,307	9,290	137
14,210	2,189	12,840	10,544	4,976
6,411	6,896	7,885	649	11,798
12,388	12,049	6,973.		

ՋԱՆԱԶԱՆ

Վիկտոր Հիւգոյի մահից յետոյ առաջին տարին նորա գրուածները ծախվում էին շատ մեծ քանակութեամբ՝ գերազանցելով նորա կենդանութեան ժամանակուայ ամենայաջող տարիներից։ Բայց այժմ ֆրանսիական հասարակութիւնն աշխարայ սառել է դէպի իւր բանաստեղծը և լաւ են ծախվում այժմ միայն Notre Dame de Paris և Les Misérables վէպերը։

Secolo լրագրում տպագրուած է Լևոն XIII պապի եպիսկոպոսութեան յիսնամեակի առիթով նորան ուղարկուած ընծաների հետևեալ ցուցակը. Աւստրիայից ուղարկուած է $1\frac{1}{2}$ միլիոն լիրա, Անգլիայից և Շօտլանդիայից՝ 1,200,000 լիրա։ Իրլանդիայից՝ 10,000, Գերմանիայից, 350,000, Իտալիայից՝ 200,000, Ֆրանսիայից՝ 225,000, Արգենտինեան հասարակապետութիւնից և Ուրուգուայից՝ 150,000, Մեքսիկայից՝ 200,000, ամերիկական հասարակապետութիւններից՝ 300,000, Բրազիլիայից՝ 100,000 Սպանիայից՝ 180,000, Թիւրքիայից՝ 30,000, Բելգիայից՝ 100,000. Ընդամենն աւելի քան $4\frac{1}{2}$ միլիոն։

Սակայն այս ցուցակը լիակատար չէ, նորերս, օրինակ, Նորֆօլկի դուքսն ուղարկել է պապին մի շքեղ քսակ՝ մէջը 125,000 ֆ. ստերլինի բանկային մի տոմս։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի։

Դ. Գ. ՌՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

Ի. Յ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11\frac{1}{4}$—$12\frac{1}{2}$ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—$12\frac{1}{4}$—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.

Ի. Վ. ՉԵՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., Քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի։

Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (և մորթու) և վիրաբուժութեան։

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7\frac{1}{4}$ ժ. ականջի, կոկորդի, քթի և նեարդային ց. (էլեքտրաբուժութիւն և մարզումն)։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՐԱՖՖԻ
1. **ՋԱՀՐՈՒՄԱՐ**
Վէպ, Թիֆլիզի հայ վաճառականների կեանքից.
Գինն է . . . . 2 ռ.
Լոյս տեսնելուց յետոյ . 2 ռ. 50 կ.
Մամուլի տակն են և մինչև Յունիս վերջը լոյս կը տեսնեն.
2) «ՎԷՊԻԿՆԵՐ և ՊԱՏԿԵՐՆԵՐ», Հ. Բ.
Գինն է . . . . . 2 ռ.
Լոյս տեսնելուց յետոյ . 2 ռ. 40 կ.
3) «ԿԱՅԾԵՐ»
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ
Գինն է 2 ռ. ճան. ծախ. 2 ռ. 31 կ.
(Երկրորդ անփոփոխ տպագրութեամբ)։
Ցանկացողները՝ փոստով ուղարկելով վճարելիքը, կարող են դիմել հեղինակի Այրին։
Նոյն տեղից կարելի է ստանալ Րաֆֆի միւս աշխատութիւնները այս հասցէով՝
Тифлисъ Сергіевская ул. № 20 д. Д. Лисицева.
Анна Меликъ-Акопянцъ Раффи.

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ստացուել են և վաճառվում են հետևեալ նոր գրքերը.
Զօհրապեան, Պատիւ, կոմեդիա 4 գործ. գ. 60 կ., ճան. ծ. 15 կ.։
Զուրաբեանց Աւ., Շիրվանի կոյսը, գ. 5 կ., ճան. ծ. 10 կ.։
Տ. Երէցեան Լէֆքէր, Մրցումն հասարակութեան հետ, գ. 40 կ., ճան. ծ. 15 կ.։
Տէր-Զաքարեանց Ս., Կաշկանդուած սէր, գ. 10 կ., ճան. ծ. 10 կ.։
Պռօշեանց Պ., Սկիզբն երկանց, գ. 1 ռ. 20 կ., ճան. ծ. 40 կ.։
—
Նոյն տեղը վաճառվում է և պ. Պռօշեանցի «Սօս և Վարդիթեր» վէպը, գ. 1 ռ. 50 կ., ճան. ծ. 40 կ.։
(30) (5—4)

Սեպտեմբերի 1-ից Երևանեան հրապարակի վրայ, քաղաքային տանը, դեղավաճառանոցին կից
ԲԱՑՈՒԱԾ Է
ԴԵՂԱՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Մ. Ի. ԱՂ ՄՈՒՐՕՎԻ
(78) (100—46)

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
ԵՂԲ. ՊԱՍԽԱԼԻԴԻ
ԲՐՈՒՍԱՅՈՒՄ (Տաճկաստան)
ԲՋՋԱՒՈՐ ՀԱՏԻԿՆԵՐ
(ЦЕЛЛЮЛЯРНАЯ ГРЕНА)
ԵՂԲ. ՊԱՍԽԱԼԻԴԻԻ
Ինչպէս արդէն յայտնի է Կովկասի շատ շերամաբուծներին, տալիս է ամենաառողջ որդ, իւրաքանչիւր մսխալը մօտ 35 ֆունտ թաց սպիտակ բոժոժ։ Ծախվում է քառակուսի արկղիկներով, որոնցից իւրաքանչիւրի մէջ $7\frac{1}{2}$ մսխալ, Կայսերական Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան բնակարանում. մսխալն արժէ 75 կ.։ Մեծ քանակութեամբ գնել ցանկացողները կարող են դիմել Տփխիս՝ Դվօրցովոյ փողոց Ազնուականաց հողային բանկի քարվանսարայում № 128., Զաքաթալա՝ Եղբ. Պասխալիդիի գրասենեակում։
(9) (12—9)

Parfumerie Ganterie
MODES
H. BERLEMONT
COIFFEUR
de S. A. I. le Grand Duc
MICHEL NICOLAÉVITCH
Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.
Salon de coiffures pour dames.
Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ։
Берлемонъ, Дворцовая улица.
(91) (100—58)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ԲԱՄԱԼԵԱՆՑԻ Ս.
„ԾՈՎԻՆԱՐ“
ԳԻՆՆ Է 20 Կ.
Դիմել Թիֆլիզ, Յովհ. Մարտիրոսեանցի տպարան. — Въ типографію И. Мартиросіанца, Орб. ул. № 1 и 2.

Ոսկէ մեդալ Թիֆլիզ 1889 Թ.
Ոսկէ մեդալ Կազան 1890 Թ.
Դ. Զ. ՍԱՌԱՋԵՒԻ
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ
ԹԻՖԼԻԶՈՒՄ
ՀԱՅԻ ԱՐԱՂ, ՍՊԻՐՏ, ԿՕՆԵԱԿ, ՌՈՄ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԼԻԿԵՕՐՆԵՐ։
Պէտք է դիմել.—Въ главную контору Д. З. Сараджева въ Тифлисѣ.
(117) (50—38)

ԶԷԹԻ ԵՒ ՍԱՊՕՆԻ
ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ
Յ. ԹԱՅԻՐԵԱՆԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻԶՈՒՄ
Ծախու են հանվում չէն սեղանատան համար՝ [illegible], [illegible] և [illegible], [illegible], [illegible] ձէթ ներկի համար և ՍԱՊՕՆ բարձր տեսակի՝ կլոր, մարմարէ և իւղալի։
ՃՇԵՐՈՎ ՎԱՃԱՌՈՒՄՆ։ Կովկասեան Ընկերութեան դեղատան վերաբերեալ ապրանքների խանութում, Ջօվանիի մօտ, Գոլովինսկի պրօսպ. տ. Դօբրժանսկու և Վօրօնցովի արձանի մօտ Վարվարովի մօտ, Գոլովինսկի պրօսպ. տ. Օրբելեանի՝ Սարաջևի մօտ, Գոլովինսկի պրօսպ. տ. Բաբանասովի՝ Բակօրովի մօտ, Նիկոլայեվսկի փողոց սեպհական տուն՝ Խուդադովի մօտ, Նիկոլայեվսկի փողոց Ալէքսանդրեան եկեղեցու դէմ Սադաղովի մօտ, Պուշկինսկայա փողոց, տուն Սունդուկեանցի՝ Գալմալեանցի մօտ, Պանասովիչի փողոց տ. № 1, Ծերեթելու մօտ, Վելիամինովսկի փողոց տ. Խսարօեվի։
ՉԱՓՈՎ ՎԱՃԱՌՈՒՄՆ։ Սեպհական վաճառանոցներում. Թուրքաց մէյդանի վրայ՝ քաղաքային [illegible]։ Սօլդատսկի Բազարում Բուդաղովի տանը, Հալվաբարի հրապարակում՝ քաղաքային [illegible] և Օլգինսկի փողոցում Մեբուրնութովի տանը։
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԱՃԱՌՈՒՄՆ գործարաններում. Երևանեան ճանապարհի վրայ սեպհական տներում։ Սեպհական վաճառատներում և գործարանում գտանվում է [illegible] անասուններին կերակրելու համար։
(16) (8—6)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՆԴՐՈՆԻԿ ԿՈՄՆԷՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ
ԹԱՐԳՄ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.
Վաճառվում է թարգմանչի մօտ, Յ. Մարտիրոսեանցի տպարանում։ Օտարաքաղաքացիք դիմելու են հետևեալ հասցէով. Тифлисъ, Типографія И. Мартиросіанца.

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ
ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ց1-ն Մարտի 1893 թ.

ՊԱՀԱՆՋՔ

I Անդամներ 1047	4,348,100—		
Անդամավճարները հանած	869,200—	3,478,900	—
II Դրամարկղ		66,902	40
III Ընթացիկ հաշիւ Պետ. բանկ. բ.		180,902	83
IV Զեղճումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ		2,233,563	90
V Զեղճ. տոկ. թղ. կտրոնների և այլն		14,981	54
VI Զեղճումն սօլօ—մուրհակների գրաւականով			
ա) պետութեան ոչ ապահովեալ արժեթղթերի	23,135—		
բ) ապրանքների	— —		
գ) անշարժ կալուածքների	182,365—	557,937	—
VII Փոխատուութիւն գրաւականով			
ա) Պետութեան ապահ. տոկ. թղ.	577,960—		
բ) « ոչ » « »	7,340—		
գ) ապրանքների	8,200—		
դ) Ոսկւոյ և արծաթի		593,500	—
VIII Առանձնական ընթացիկ հաշիւներ		954,893	22
IX Պահեստի դրամագլխին պատկ. տոկոս. թղթեր		105,619	40
X Ընկերութեան պատկանեալ արժեթղթեր		46,[illegible]33	64
XI Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	316,207 45		
Ընկերութեան հաշիւը (Nostro)	1,285,724 53	1,601,931	98
XII Բողոքուած մուրհակներ		1,165	—
XIII Պայմանաժամ. անցուցած փողատ.		— —	—
XIV Մուրհակի և դրոշմակիր թղթեր		2,697	85
XV Ընթացիկ ծախսեր		10,104	37
XVI Յետ ստացուելիք ծախսեր		7,678	13
XVII Կահ կարասիք և սկզբն. ծախսեր		3,461	53
XVIII Փոխանցիկ գումարներ		29,272	30
Ր. Ա.		9,925,421	03

ՊԱՐՏՔ

I Ապահովութեան դրամագլուխ		3,478,900	—
II Հիմնական դրամագլուխ		869,200	—
III Պահեստի դրամագլուխ		109,037	63
IV Օժանդակութեան դրամագլուխ ծառայողների համար		4,302	78
V Դրամական աւանդներ՝			
ա) Ընթացիկ հաշուով հասարակ	408,642 81		
բ) « » պայմանաւոր	519,334 10		
2) Պայմանաժողով՝			
ա) Ընկերութեան անդամներից	245,496 —		
բ) Օտար անձինքներից	1,621,509 19		
3) ցպահանջ			
ա. Ընկերութեան անդամներից	21,287 —		
օտար անձինքներից	498,418 08	3,315,137	90
VI Պետ. բանկ. զեղչ. մուրհակներ		— —	—
VII Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բան. մուրհակներով		— —	—
արժեթղթերով		— —	—
VIII Ընկերութ. փոխադրութեամբ ստացած հասանելի գումարներ		207,834	48
IX Թղթակիցներ			
ա) Նոցա հաշիւը (Loro)	143,309 70		
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	1,495,258 64	1,638,568	34
X Չը վճարուած դիվիդենդ		11,733	06
XI Չը վճարուած տոկոսներ աւանդների և ընթաց. հաշիւների		61,448	69
XII Փոխանցիկ գումարներ		30,364	87
XIII Հանումներ ըստ 16-րդ յօդ. տրամադր.		30,745	84
XIV Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ		— —	—
XV 5% պետական հարկ դրամագլխներից		76	72
XVI Զուտ արդիւնք		102,464	23
Ր. Ա.		9,925,421	03

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Марта 1893 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул. д. № 1—2